ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն), դեկտեմբերի 4-ից 6-ը, 2024 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Քենթի Արքայազն Մայքլի Ջորջ Չարլզ Ֆրանկլին

5. **Գործուղման նպատակը.**
   Աշխատանքային այց՝ երկկողմ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր քննարկելու նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**
   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն աշխատանքային այցիս շրջանակներում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության ընդլայնման, համատեղ ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Հանդիպել եմ Թոնի Բլերի գլոբալ փոփոխությունների ինստիտուտի (TBI) և Օքսֆորդի Էլլիսոնի տեխնոլոգիական ինստիտուտի ներկայացուցիչների հետ:
  TBI քաղաքականության գլխավոր ռազմավարագետ և գործադիր ղեկավարության թիմի անդամ Բենդիկտ Մեյկոն Կունիի, կազմակերպության Հարավային և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն Նիկոլաս Դունեյսի և Օքսֆորդի Էլլիսոնի տեխնոլոգիական ինստիտուտի առողջապահության և տնտեսական

քաղաքականության տնօրեն Ինես Հասանի հետ հանդիպման ընթացքում քննարկել ենք երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը:

- Հանդիպում եմ ունեցել International Hospitals Group (IHG) կազմակերպության գործադիր տնօրեն Չեսթեր Քինգի հետ, որի ընթացքում քննարկել ենք հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոնների ստեղծմանն առնչվող մի շարք հարցեր. դիտարկել ենք նաև խնամքի հաստատությունների, այդ թվում՝ փոքր տների կառավարման լավագույն մոդելների ներդրման հնարավորությունը:
  Կազմակերպության գործադիր տնօրենը ներկայացրեց International Hospitals Group առողջապահական ծառայությունների համաշխարհային ընկերության գործունեությունը, որը մասնագիտացած է առողջապահական հաստատությունների մշակման, նախագծման և գործառնական կառավարման մեջ:

- Հանդիպում եմ ունեցել Քենթի արքայազն Մայքլ Ջորջ Չարլզ Ֆրանկլինի հետ, որի ընթացքում քննարկել ենք հետագա համագործակցության ուղղությունները, անդրադարձ է կատարվել նաև երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցության ընդլայնման և խնամատարության ինստիտուտի զարգացման նպատակով 2023 թվականին ստորագրված եռամյա հուշագրի դրույթներին: Դիտարկել ենք նաև Հայաստանում նախատեսվող երեխաների խնամատարության տարածաշրջանային երկրորդ համաժողովի կազմակերպման հնարավորությունը:
  Երեխաների խնամատարության ինստիտուտի հանրահռչակման և զարգացման համար արքայազն Մայքլն առաջարկեց հանդես գալ համատեղ նախաձեռնություններով նաև Մերձավոր Արևելքի և Ծոցի երկրներում:
  Հանդիպման ավարտին արքայազն Մայքլն ընդունեց Հայաստան այցելելու հրավերս:

Քենթի արքայազն Մայքլի հրավերով՝ Լոնդոնի Հեմփթոնյան թագավորական պալատում մասնակցել եմ երեխաների խնամատարության ինստիտուտի զարգացմանն ուղղված բրիտանական Care for Children միջազգային կազմակերպության ամենամյա գալա ընթրիք-քննարկմանը:

Միջոցառմանը ներկա էին ոլորտային պատվիրակություններ աշխարհի տարբեր երկրներից. մասնակցել է նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարուժան Ներսեսյանը:

Իմ ելույթում խոսել եմ երեխաների խնամատարության ինստիտուտի զարգացման, յուրաքանչյուր երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի լիարժեք իրացման ու նրանց լավագույն շահի ապահովման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացման կարևորության մասին: Նշել եմ, որ ինստիտուտի շուրջ ամենատարբեր ձևաչափերով քննարկումները հնարավորություն են տալիս շարունակել լավարկել ոլորտը՝ ծնողական խնամքի կարիք ունեցող երեխաների կյանքը բարելավելու նպատակով:

Անդրադառնալով գործընկեր կազմակերպությունների հետ այս ուղղությամբ իրականացված և նախատեսվող աշխատանքներին՝ ընդգծել եմ Care for Children կազմակերպության հետ ունեցած համագործակցության արդյունավետությունը: Այս համատեքստում շեշտել եմ նաև համատեղ ստորագրված փոխըմբռնման հուշագրի կարևորությունը, որի շրջանակում ստանձնել ենք պարտավորություն համատեղ աշխատանքներ իրականացնել խնամատարության ինստիտուտի զարգացման ուղղությամբ:

Իմ ելույթում անդրադարձել եմ նաև նախորդ տարի Հայաստանում անցկացված խնամատարության տարածաշրջանային համաժողովին, որի հիմնական նպատակն էր Հայաստանում և միջազգային մակարդակում բարձրացնել խնամատարության մասին իրազեկվածությունը, ներկայացնել համաշխարհային լավագույն փորձը և մշակել քաղաքականություն՝ միտված Հայաստանում, Հարավային Կովկասում, Մերձավոր Արևելքում և այլ տարածաշրջաններում խնամատարության համակարգի բարելավմանը:

Գալա ընթրիք-քննարկման ավարտին Care for Children միջազգային հասարակական կազմակերպության ղեկավար Ռոբերտ Գլովերին փոխանցեցի նաև հուշադրամ՝ խնամատարության ինտիտուտի զարգացման գործում բացառիկ ջանքեր ներդնելու համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Թոնի Բլերի գլոբալ փոփոխությունների ինստիտուտի և Օքսֆորդի Էլլիսոնի տեխնոլոգիական ինստիտուտի ներկայացուցիչների հետ հանդիպման առանցքը ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ. ռազմավարություն էր. պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ քննարկել, մշակել և իրականացնել պիլոտային ծրագրեր ռազմավարության նպատակային ուղղություններից երկուսի՝ վաղաժամ մահերի կանխման և ակտիվ ծերության ապահովման ուղղությամբ: Նախատեսվում է այս ուղղությամբ առաջիկայում մշակել համատեղ գործողությունների ծրագիր:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկություններ չկան:

12/11/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ստորագրությունը, ամսաթիվը:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն*

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը *ՀՀ վարչապետի 20.11.2024 թ. N 1040-Ա որոշում*

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյան

4. Գործուղման վայրը *Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն)*

5. Գործուղման ժամկետները *04.12.2024թ.-06.12.2024թ.*

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

ճանապարհածախս, գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	-	-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը (դրամ)		
Այլ ծախսեր	Հակահամաճարակային Նմուշառումների վճար	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր (նկարագրել)	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

12/11/2024

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ Signed by: MURADYAN SAMVEL 1104630109 **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**